հափառը և շարունակում է ս. պատարագը:

Ահա վերաբերումը կատարող եպիսկոպոսը արտասանում է «Հավատամքը» և նրա սրտառուչ աղոթքի երգերը տարածվում են ողջ տաճարում:

«Հավատամքից» հետո վերսկսվում է օծման արարողությունը: Վեհափառի դեմքը դեպի ժողովուրդը դարձած, ձեռքերը բաց թացրած և ծունկի եկած աղոթում է: Գարեգին Ա-ին վեհափառ կաթողիկոսը կարդում է համապատասխան աղոթքները:

Հուզվելով լի վեհափառ Հայրապետի սիրտը բաբախում է, նրա շրթունքներն անընդհատ շարժվում են, երևի նա իր հոգևոր ալեկոծությունների ամենանվիրական աղոթքներն է մրմնջում լռելյայն:

Հանդիսավոր վեհությունն իր գագաթնակետին է հասնում, երբ վեհափառ Գարեգին Ա-ը արտասանում է «Առաքելոյ աղաւնոյ» օրհներգությունը և սրբալույս մյուռոնով սկսում են օծել նրան:

Հուզված է նորընտիր կաթողիկոսը, նա չի կարողանում զսպել իր ներքին, հոգևոր ապրումների հեղեղները և նրա խոհուն աչքերից սկսում են դուրս ժայթքել մարդարտանման արտասուքները:

Նա հենց այս պահից զգում է այն ծանրությունը, որ դնում են նրա ուսերին:

Գիտակցությունը և ինքնաճանաչությունը վոթորկել են նրան:

Կրկին հնչում են օծման աղոթքները և ահա նրա դլխին են փռում հայրապետական քողը:

Վեհափառը օրհնում և խաչակնքում է բոլորին և ապա շարունակում ս. պատարագը:

Պատարագն ավարտվում է:

Հոգևորականների և աշխարհական պատգամավորների թափորը Վեհին առաջնորդում է դեպի վեհարան:

Խուռն բազմությունը բռնել է ճանապարհը և սրտագին ողջույններով դիմավորում է իր նորաօծ կաթողիկոսին: Վեհափառը խաչակնքում է նրանց և օրհնում: Նա արդեն վեհարանումն է:

Նա բազմած է կաթողիկոսական գահին: Նրա աջ և ձախ կողքին կանգնած են գավազանակիրներն ու կաթողիկոսական խորհրդանշանները բռնողները:

Կանոնավոր հերթականությամբ Նորին Սուրբ Օծության Աջը համբուրելով շնորհավորում են նրա գահակալությունը նախ հոգևորականները, ապա աշխարհական պատգամավորները և հետո հյուրերը:

Ողջույնի ճառերը հակիրճ են, ամփոփ, բայց սրտառուչ:

Շատերը ուրախությունից արտասվում են:

Վերջապես հայ եկեղեցու Լուսավորչի թափուր գահի վրա բազմած է արժանավոր Հայրապետը՝ վեհափառ Գևորգ VI-ը:

Ռ. Վ.

ՃԱՇԿԵՐՈՒՅԹ Ի ՊԱՏԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ-Ի

Կաթողիկոսական օծման առթիվ հունիսի 24-ին Ճեմարանի շենքի դահլիճում Ճաշկերույթ տրվեց Ազգային Եկեղեցական Ժողովի պատգամավորներին և հյուրերին:

Ճաշկերույթին ներկա էին ՍՍՌ Մխիթյան կառավարության ներկայացուցիչ և ՍՍՌՄ Ժողկոմսովետին կից Կրոնական պաշտամունքների Խորհրդի նախագահ Ի. Վ. Պոլյանսկին, Հայաստանի ՍՍՌ կառավարության ներկայացուցիչ ՀՍՍՌ Ժողկոմսովետին կից հայ եկեղեցու գործերի Խորհրդի նախագահ Մ. Ն. Հովհաննիսյանը: